ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Շիրակի մարզի <<Արդենիսի հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի Պատմություն-10ժ., Հասարակագիտություն-2ժ., Տեխնոլոգիա-3ժ,, Երաժշտություն-4ժ., Կերպարվեստ-3ժ., Ռուսաց լեզու-12ժ., Գերմաներեն-13ժ., Հայոց լեզու և գրականություն-15ժ. առարկաների ուսուցիչների թափուր տեղերի համար

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:
Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում.

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (ձև 1),
2. Փաստաթուղթ (դիպլոմ)՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն (ձև 4)
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում)
6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք
8. Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են 2025 թվականի սեպտեմբերի 5-ից սեպտեմբերի 18-ը ներառյալ ժամը 10:00 – 15:00, բացի շաբաթ և կիրակի օրերից:
Փաստաթղթերի ընդունումն ու հայեցակարգը կանցկացվի ըստ կարգի:
Մրցույթն անցկացվելու է Արդենիսի հիմնական դպրոցում 2025 թվականի սեպտեմբերի 24-ին, ժամը 12:00-ին:
Հասցեն՝ գյ. Արդենիս, 4 փող, շ.2:
Մրցույթում հաղթողների հետ կկնքվի հիմնական աշխատանքային պայմանագիր:
Տեղեկությունների համար զանգահարել 093 22-37-64 հեռախոսահամարով:

Արդենիսի հիմնական դպրոց